ՆՈՐ-ԴԱՐ

№ 123 ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 21 Օգոստոսի 1890 Երեքշաբթի 21 Օգոստոսի ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 123

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, 3 ամիսը՝ երեք ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., Հատով 5 կ. պէկ։
Բաժանորդ գրուած են Թիֆլիսում միայն կամքատրատները։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից հինգ։ 2-րդ յայտարարութիւնները ընդունւում են ամէն լեզուներով։ Յայտարարութիւնների գնաին 2 կ., բնկամների համար կէսնապաս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Հեռագրեր

Քրոնիկոն.—Լուրեր։ Նուիրատուութիւններ դպրոցների հասարակութեան աշխատում և ուսուցչական խումբը։ Նամակներ Ճանապարհից։

Թղթակցութիւններ.—Խնածախ գիւղից։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

Բանասիրական.—Ռակէ ապարանջան։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 օգոստոսի.—Երէկ հարաւ-արևմտեան սաստիկ քամին ծովից ջուրը դուրս քշեց։ Երեկոյեան ժամը 11-ին Նևայի և Ջրանցքների ջուրը սովորականից 7 ֆուտ բարձրացաւ. Պետերբուրգի ցած տներում փողոցները ջրանցքների էին փոխուել. ներքնատները ջրով հեղեղուեցին, ձիերով յարաբերութիւնը, մանաւանդ կղզիների վրայ, անկարելի է դարձել։ Ծամը 3-ին ջուրը պակասեց։

Պետական կալուածների մինիստրութեան մէջ ծրագիր է մշակուած Ռուսիայի արևմտեան նահանգներում ալի արքունի պահեստներ շինելու։

Կ. Պօլսի ռուսաց դեսպան Նելիդովն իւր պաշտօնատեղին ուղևորուեց։ Բուքարեստի ռուսաց դեսպան Խմիտրովօն Պետերբուրգ եկաւ։

Պետական կալուածների մինիստրը մտադիր է մի ուղևորութիւն կատարել Ռուսիայի հարաւային կողմերում, այցելել Եկատերինոսլաւի, Խերսօնի և ուրիշ քաղաքների գիւղատնտեսական ցուցահանդէսները։

Երկրագործութեան դեպարտամենտի տեսուչը, մօտերքս ուղևորութիւնից վերադառնալով, նորից Ռուսիայի հարաւային կողմերն ուղևորուեց։

Պետերբուրգի նահանգի գիւղական 12 ժողովներում վճիռ է արձակուած արբեցութեան համար տուգանք առնելու մասին։ Տուգանքները յատկացւում են ծխական-եկեղեցական ուսումնարաններին օգտին։

ՊՐՕՊԱՅՍԿ, Մօգիլևի նահ.—Այստեղի ամբողջ աւանը բոլորովին այրուեց։

ՕՕՖԻՍ, 18 օգոստոսի.—Պանիցայի այրին մերժեց Կօբուրգեան պրինցես Կլիմէնտինի առաջարկած թոշակն ընդունել։

Կ. ՊՕԼԻՍ.—Հայոց շարժման պատճառով մեծ վիզիր Քեամիլ-փաշայի դրութիւնը խախուտացել է. նրան յաջորդ արտաքին գործերի մինիստր Սայիդ-փաշային են համարում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Սեպտեմբերի 15-ից վերջնում է ռուսաց ապրանքների արտասահմանի երկաթուղիներով Սօսնովիցի, Գրանցիկի, Վոլօչինսկի և Բաֆիվիլովի մաքսատներն տրանզիտով տեղափոխելը, իսկ Բեսսարաբիայից Աւստրիայով Աւստրիայի սահմանակից մաքսատները տարուող տեղական արդիւնագործութիւնների տրանզիտը պահպանում է իւր զօրութիւնը։

Վիլնօյի, Վարշաւի և Կիևի զինուորական շրջաններում շտաբների կառավարիչների երկրորդ օգնականների պաշտօնները են հիմնւում։

Երէկ ֆինանսների մինիստրը դուրս գնաց Պետերբուրգից։

Երէկ վերջացաւ Րուբինշտայնի մրցանակի համար եղած պիանիստների միջազգային մրցումը։ Մրցանակն, ինչպէս պիանիստ ուս Դուբասովը տարաւ, իսկ մրցանակն, ինչպէս երաժշտագէտ—իտալացի Բուսսոնին։

«Нов.»-ն հաղորդում է, որ Ռուսիան և նրա շրջակայքը աշխարհագրական տեսակէտից ուսումնասիրելու համար Պլխաւոր շտաբին կից բաժանարար-տեղանկարագրական բաժանմունք հիմնելու մասին խնդիրը դրական մրցքով է վճռուած։

ՄՕՍԿՈՒԱ.—Այսօր տեղս հասաւ ֆինանսների մինիստրը, դիտեց պետական բանկի դրամանեակի համար կառուցուող շինութիւնը, որտեղ պէտք է տեղափոխուեն Սարօգանովի տեխնիքական ուսումնարանն և տրգիշնագործական թանգարանը, նոյնպէս և շինուող վերին առևտրային խանութները։ Ժամը 4-ին մինիստրը Նիժնիյ-Նովգօրօդ ուղևորուեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 օգոստոսի.—Нов. В.»-ն հաղորդում է, որ Բուխարայի էմիրը վճռել է իւր բոլոր զօրքին ռուսաց զօրքի հագուստի ձևով հագցնել և խընդրել է ռուս փորձառու սպաներ ուղարկել Բուխարա զօրքին սովորեցնելու համար։

Նոյն լրագիրը հաղորդում է, որ լուր է տարածուած, թէ Խահակխանը մտադիր է խնդրելու, որ իրեն ռուսահպատակ ընդունեն, նրան ռուսաց զօրքի մէջ հաշուելով։

Ինչպէս լսւում է, գեղատնտեսին նոր կանոնագրութիւնը 1891 թուից սկսած է գործածութեան մէջ մտնի։

Կազակների զօրքերի գլխաւոր վարչութիւնը ստանիցաների հասարակական կառավարութեան վերաբերմամբ նոր կանոնագրութիւն է մշակել։

ՆԻԺՆԻՅ-ՆՈՎԳՕՐՕԴ.—Այսօր գեներալ Բաբանովի նախագահութեամբ տեղի ունեցաւ նաւագնացութեան համագումարի երկրորդ ժողովը։ Հերթական խնդիրը ճանապարհների հաղորդակցութեան կազմի շրջանը Նիժնիյ-Նովգօրօդ տեղափոխելու մասին էր։ Նաւագնացութեան ընկերութիւնների ներկայացուցիչները միաձայն այդ շրջանը տեղափոխելու օգտին խօսեցին։

Կ. ՊՕԼԻՍ.—Սուլթանի հրամանով Մակեդօնիայի վանքի յունադաւանների միտրոպօլիտը ձերբակալուած է։ Միտրոպօլիտին մեղադրում են օտար կառավարութեան հետ գրագրութիւն ունենալուն համար։

ԲԵԼԳՐԱԴ.—Նատալիա թագուհին մտադիր է հրատարակել Միլան Օբրէնովիչի սերբ-բուլղարական պատերազմի ժամանակ գրած նամակները, որպէս զի մերկացնէ նախկին թագաւորի երկդիմի գործունէութիւնը։

—

17 օգոստոսի

Լօնդօն 82,05 ր., 81,3/4 ր., 82,05 ր.
Բերլին 40,30 ր., 40,1/4 ր., 40,30 ր.
Վարդ 32,52 1/2 ր. 32,40 ր. 32,52 1/2 ր.
Պօրտֆօլիօ . . . . . 6 ր. 60 կ. սակ.
Մաքս. կուպօն . . . . 132 1/4 ր. — կ. սակ.
Ագիօ . . . . . 1 ր. 11 կ. գն.
Բօրաքսին գին . . . . . 5 և 6 1/2 %
Պետական-բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . . . . 100 3/4 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 100,12 ր. — կ. սակ.
3-րդ . . . . . 100 ր. — կ. գն.
4-րդ . . . . . 100 ր. — կ. գն
5-րդ . . . . . 100 ր. — կ. գն.
6-րդ . . . . . 100 ր. — կ. գն.
100 և 1000 ր. արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի. . . . . 101 ր. — կ. գն.
2-րդ . . . . . 101,12 ր. — կ. սակ.
3-րդ . . . . . 101 1/4 ր. — կ. սակ
Առաջին 5% ներքին փոխառութեան տոմսեր . . . . . 228 3/4 ր. — կ. գն.
2-րդ . . . . . 218 ր. — կ. գն.
Երրորդ փոխ. Ագն. հոդ.
բանկի . . . . . 213 3/4 ր. — կ. գն.
5 1/2% բնեռեր . . . . 103 3/4 ր. — կ. գն.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր.
օբլիգ. . . . — ր. — կ. սակ.
Բօրսայի ենթադրութիւնը խաղաղ է։

ՔՐՕՆԻԿՈՆ

Մինսկում կայացած գերմանական մարդաբանական XXI-րդ կոնգրէսում Բուգոլճի Վիրխովը մօտ ժամանակներս Կովկասում արած պատմական հետազոտութիւնների մասին մի զեկուցում կարդաց։ Կովկասում և Անդրկովկասում այդ հետազոտութիւնների ժամանակ բրօնզի մի աման և նոյնպէս բրօնզի զէնք է գտնուած, որոնք ցոյց են տալիս, որ այդ հողերն անդրպատմական ժամանակներում առևտրական մեծ յարաբերութեան տեղեր են եղել։ Վիրխովն ուշադրութիւն հրաւիրեց նոյնպէս գըտնուած օտարատեսակ զարդարանքների վրայ և ենթադրեց որ զարդարանքների ծագումը Միջին Ասիային կարող է պատկանած լինել։

—

Անդրկովկասեան երկաթուղու Ցիպա կայարանից «Кав.»-ին գրում են, որ այս օրերս Սուրամի ներքնատուն մէջ փորձեր կատարուելով, ներկայումս հաստատապէս կարելի է ասել, որ ներքնատունն օգոստոսի 30-ին կը բացուի։

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԱԿԷ ԱՊԱՐԱՆՋԱՆ

(Ասպետական ժամանակներից)

—

Մարիամ Օտինէին զեղեցկուհի կարելի էր անուանել։ Բայց նրա զեղեցկութիւնը բնաւին չէր յիշեցնում հրեչտակների զեղեցկութիւնը, որ միակերպ նկարում է մեր երևակայութիւնը, բայց և այնպէս Մարիամի զեղեցկութիւնը գերբնական էր, նրա մէջ մի տեսակ դիւական բան կար, ինքը խաւարի ոգին ժամանակից էր արել նրան իւր դիւթութիւններին՝ դրանց երկրից վրայ տարածելու համար։

Պիէտրօ Օրլէանօն սիրում էր նրան, սիրում էր անհուն սիրով, սիրում էր այն սիրով, որի մէջ երջանկութիւն են փնտրում, բայց միայն տանջանք են գըտնում։

Մարիամը քմահաճ էր և խրատածէն, ինչպէս առհասարակ բոլոր թևթևամիտ կանայք։

Պիէտրօն նախապաշարուած էր նրանից, ինչպէս այն ժամանակների տղամարդկանց մեծամասնութիւնը։

Նրանք երկուսն էլ ծնունդ և ապրում էին Տօլէդոյում։

Մի անգամ Պիէտրօն պատահեց Մարիամին լաց լինելիս։

—Ինչու՞ ես լաց լինում։

Մարիամը սրբեց աչքերը, անթարթ աչքով նայեցաւ նրան և կրկին լաց եղաւ։

Պիէտրօն մօտեցաւ նրան, առաւ նրա ձեռքը և կամենալով պատչամբի յենարանին, որտեղից Մարիամը նայում էր գետի ալիքներին, կրկին անգամ հարցրեց նրան։

—Աան, ինչու՞ ես լաց լինում։

Կատաղի Տագի ջրերը կարծես տառապելով պատում էին պատչամբի տակ, գիպչում էին ժայռերին, որոնց վրայ ձգուած էր արքայական քաղաքը. արևը ծածկուել էր հարևան լեռների ետևը. գիչերն արդէն վարագուրում էր չառագունած երկինքը և ջրերի միակերպ ծոցփիւնն էր միայն, որ խանգարում էր ընդհանուր լռութիւնը։

Մարիամն անհանգստութեամբ պատասխանեց։

—Ախ, մի հարցնիր ինձ այդ մասին, մի հարցնիր։ Ես չեմ կարող ասել, թէ ինչու համ ես լաց լինում, իսկ դու չես կարող ինձ հասկանալ։ Դիտես, Պիէտրօ, կնոջ սրտի մէջ երբեմն այնպիսի ցանկութիւններ են ծնւում, որոնք հատուցանքներով միայն կարող են արտայայտուել, այնպիսի անմիտ ցնորքներ են ծնւում, որոնք քարանում են երևակայութեան մէջ և որոնց չես համարձակւում անգամ արտայայտել. մեր անհասկանալի բնաւորութեան այդ յատկութիւնները տղամարդկանց համար բոլորովին անհասկանալի են։ Ուստի, աղաչում եմքեզ, ոչինչ մի հարցնիր ինձ։ Եթէ ես ասեմ, թէ այս րոպէիս ինչ է ինձ յուզում, դուք ինձ չես հասկանալ և, չատ կարելի է, միայն կը ծիծաղես ինձ վրայ...

Այդ ասելով, նա գլուխը խոնարհեցրեց, իսկ Պիէտրօն իւր հարցը կրկնեց։

Փոքր ինչ երիտասարդից յետոյ, Մարիամը պատասխանեց նրան խուլ, ընդհատուող ձայնով.

—Դու այդ կամենում ես, բայց դա չիմաստութիւն է... Ես միայն քո ծիծաղը կը չարժեմ... բայց... միևնոյն է... Աստուածածնի սուրբ էլ... Աստուածածնի պատկերը, սեղմուած, ոսկէ պատուանդանի վրայ դրած, փաստօմ էր ինչպես հոգ... դաշտամարի երեքուն ձայները տարածւում էին հեռուն, գետից գալիս քահանաների խումբն Աստուածածնի մեղմ էր երգում և նա, բարեպաշտ ըղձացումներով տոգորուած, սրտանց աղօթում էր, բայց յանկարծ գլուխս բարձրացրի... հոգեպարը ընկաւ ուզանին և յառած մնաց Աստուածածնի պատկերին... ախ, պատկերին չէ... այլ մի ապարկայի, որից ես այժ չկանգնայ աչքերս հեռացնելու։ Մի ծիծաղիր... այդ ապարկան ոսկէ ապարանջանն էր, որ... անց էր կացրած Աստուածածնի ձեռին, որի վրայ հանգչում էր Աստուածային Մանուկը... Աչքերս խոնարհեցրի և սկսեցի աղօթել... բայց —վերադարձայ։ Աչքերս նորից նոյն ապարկային գարձան... եկեղեցու ճրագները պայծառ արտացոլում էին ապամանեակի կապարների մէջ և հազարաւոր կայծեր—կարմիր, կապոյտ, գեղին և կանաչ գոյներով զոդուած էին ապարանջանի չարջը և լինից արագութեամբ ու ցոլքով չայտնում էին ինձ։ Ես զարմացայ եկեղեցուց, ապարանջանի վրայ և դարձայ նորից դէպի աղաղակող Պիէտրօն։

—Ես ոչինչ չեմ լսում, ոչինչ չեմ տեսնում, միայն կը ծիծաղես ինձ վրայ։ Ես ապարանջանի վրայ եմ նայում, ապարանջանի վրայ, որ ինձ տուել է Աստուածածնի սուրբ ծառան։

—Ո՞ր Աստուածածնի ձեռքին է անցկացրած այդ ծառայան։

—Այն, որ եկեղեցու սեղանի վրայ է դրած,—հազիւ չլսելց Մարիամը։

—Սեղանի՞ վրայ, եկեղեցո՞ւմ,—սարսափած բացականչեց Պիէտրօն։—Ինչու՞, ինչու՞ դա այնտեղ է։ Ինչու՞ դա առանձնորդի սաղաւարդի վրայ չէ, Թագաւորի Թագի վրայ կամ վերջապէս, աստանդի ճանկերում. դրանից էս կարող էի խլել, բայց Աստուածածնից, մեր հովանաւորուհից, ո՛չ, անկարելի է, անկարելի է։

—Երբէք, երբէք,—չլսելց Մարիամն և դարձեալ լաց եղաւ։

Պիէտրօն բուռն հայեացքով նայում էր գետի ալիքներին, որոնք արագընթաց առաջ էին վազում և դիպչելով ժայռերին՝ վրիպրադէզ ցրիւ էին գալիս։

—

Ինչ բան է Տօլէդոյի մայր եկեղեցին։ Երևակայեցէք պրանիտների ահագին սիւների մի անտառ, որոնց ճիղերը, հիւսուած լինելով, մի մեծաչուք կամար են կազմում, որի տակ կարծեցեալ և իրական էակներ են ապրում, որոնց հանճարն է մարմնացրել։ Երևակայեցէք բուսու բներն և բուսաւորութեան եռանդուր մեծութեան մի զուգաւորութիւն, որի հետ թէև կռիւ է մղում, բայց միմեանց մէջ բոլորովին կորչում է վառ կանթեղների լոյսը։ Երևակայեցէք զա-

ԵՐԵՎԱՆ

1890—№ 123

«Եր. Բհ.»-ն նրա է, որ ինչ է ասում, ամեն ինչ ճիշտ է, ամեն ինչ ուղիղ է, ամեն ինչ ազնիվ է, ամեն ինչ հայրենասիրական է, ամեն ինչ ազգային է, ամեն ինչ ազգանվեր է, ամեն ինչ ազգասիրական

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԽՈՒՉՈՒԹԻՒՆ

Թիւ 10 Հոկտ. 9

Ա. Ղ.

Ես քանի էի՝ ամեն տարի ես յուշիս պատկերասրահում վերակենդանացնում էի մի հին ծանօթի, որ ինձ համար ամենից սիրելին էր, ամենից թանկագինը, ամենից մտերիմը։ Ես նրան տեսնում էի ամեն տարի, ամեն տարի նրա հետ խօսում էի, նրա հետ ծիծաղում էի, նրա հետ լալիս էի։ Ես նրան տեսնում էի ամեն տարի, ամեն տարի նրա հետ ես ապրում էի, նրա հետ ես մեռնում

վերջերքին Կոնտինիոն տիրից գետերի վրայ չրջող անգլիական «Ջոն Ստեֆէնսոն» անունով չոգենաւը և այդ չոգենաւի վինուորների խմբին գերի հրատարակեց։ Լիսաբոնի անգլիական դեսպանը այդ առիթով անմիջապէս բացատրութիւն պահանջեց Պորտուգալիայի կառավարութիւնից։ Նրան խոստացան, որ անգլիացիները Պորտուգալիայի հողը մտնելուն պէս ազատ կը թողուին։ Այն ինչ Պորտուգալիայի կառավարութիւնը լէյտընանտ Կոնտինիոյին վինուորական դատարանի ենթարկեց և կարգադրութիւն արաւ, որ նա Կվիլիմանէ գնայ, Պաշտօնաթող լէյտընանտը կտրուկ կերպով պատասխանեց, որ ինքը չէ հպատակում այդ կարգադրութեանը։ Պորտուգալիայի պարլամէնտի պատգամաւորների երկու ժողովների էլ ընդհմադիր կուսակցութիւնը կառավարութեանը զրոյթիւններ ներկայացրեց, որոնց մէջ, մեծ գովասանքով խօսելով Կոնտինիոյի քաջութիւնների մասին, կառավարութեանն իրաւունք չէ համարում քաջ և հայրենասէր պօրտուգալացու մղած պատերազմի մէջ օգնել անգլիացիներին։ Կառավարութիւնն այդ դէպքումն էլ խիստ յանդիմանութեամբ խօսեց լէյտընանտ Կոնտինիոյի արարքների մասին, բայց և այնպէս Պորտուգալիայի ժողովուրդն և ընկերութիւնները, մանաւանդ ուսանողական ընկերութիւնը, վճռել են իրենց համարձակ հայրենակցին ըստ չափու կարողութեան աջակցել նրա Հարաւային Աֆրիկայում Անգլիայի դէմ ձեռնարկած պատերազմի մէջ։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լսում է, որ առաջիկայ աշնանը գերմանական կանցլեր Կապրիվին տեսակցութիւն պէտք է ունենայ իտալական մինիստր-նախագահ Կրիսպիի հետ, որի հետ գերմանական քաղաքականութեան ներկայ ղեկավարը, ռուսաց և աւստրիական պետական գործիչների հետ ծանօթանալուց յետոյ, մտադիր է նոյնպէս բարեկամանալ։

—Իտալիայի թագաւորը մտադրութիւն ունի առաջիկայում մի ուղևորութիւն կատարել։

—Վերջին տեղեկութիւններին նայելով, Սպանիայի Ալֆոնսոյ, Բադախոզ և Տօլէտօ գաւառներում օգոստոսի 3 ին խօլերայով 33 հոգի են հիւանդացել, որոնցից 24-ը մեռել են։

—Նապօլիայի Իսկահամա և Նագասակի նաւահանգիստներում խօլերայ է յայտնուել։

—Վերջին մարդագրութիւնից երևում է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգների բնակիչների թիւը ներկայումս 69 միլիօն է։ վերջին տաս տարուայ ընթացքում այդ թիւը 30 % է աւելացել։

—Վինդհօրսի օրգան «Germania» լրագիրը մի լուր է հրատարակել, որ արդիւնաբերական չրջաններում աղմուկ կարող է բարձրացնել։ Ցիչեալ լրագրի ասելով, Սակսոնիայի գործարանատէրերը դաղտնի ընկերութիւն են կազմել, նպատակ ունենալով հետևել բանուորներին, արգելք լինել նրանց սօցիալ-դեմոկրատների կողմն անցնելուն և կռուել գործադուլների դէմ։

—Վիննայի լրագիրները հաղորդում են, որ գերմանական և ռուսաց կայսրների տեսակցութիւնից յետոյ, տեղի կունենայ Վիլհելմ կայսրի և Ֆրանց-Իոզէֆի տեսակցութիւնը։ Այդ տեսակցութիւնը կը լինի պրուսական Սիլեզիայի Բօնչոկ ամրոցում, սեպտեմբերի սկիզբներին։ Այն ժամանակ այնտեղ կը գնայ Սակսոնիայի Ալբերտ թագաւորը, որին Վիլհելմ կայսրն է հրաւիրել։ Տեսակցութիւնը բոլորովին մասնաւոր բնաւորութիւն կունենայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շաբթան հետևեալը։—Սուլթանը հրամայել կայսերական պալատում ծառայող բոլոր հայ խոհարարներին, այգեպանների և բնակարիների հաշիւը վերջացնել։ Սուլթանի այդ կարգադրութեան պատճառով, 150 հայեր առանց պաշտօնի մնացին։

Մուշն ուղևորել։—Տուրկիրտում (Ֆրանսիայում) մօտերքս մի ինքնուրոյն և միևնոյն ժամանակ զղուելի զրաղ եղաւ։ Հակառակորդներից իւրաքանչիւրը պէտք է 50 հատ մեծ մուկն ուտէր։ Ով չատ կուտէր կը վերջացնէր, նրան 1,000 ֆրանկ էր նշանակուած։ Գրաղը կատարուեց անդղին բազմութեան ներկայութեամբ։ Մրցակիցներից առաջինը 50 հատ մուկը կերաւ 7 րոպէ 20 վայրկեանում, այդպիսով մի րոպէում 7 մեծ մուկ ուտելով։ բայց մի ուրիշ մարդ դուրս եկաւ, որ 3 րոպէ և 55 վայրկեան վերջացրեց 50 հատ մեծ մուկը։ Վերջինս 1,000 ֆրանկ և բուռն ծափահարութիւններ էլ ստացաւ։

Երջանիկ ամուսիններ։—Անգլիական լրագիրները Ղնումեն քաղաքում (Էսէքսում) եղած հետևեալ սովորութիւնն են պատմում, որ սկիզբ է առել միջին դարերից։ Այն ամուսինները, որոնք մի տարուայ մի օրուայ ընթացքում չեն կռուում և բոլորովին տրտունջ չեն հանում իրենց ամուսնութեան համար, բոլոր տեղական բնակիչների կողմից խոշոր մի ահագին ապրիտ նուէր են առնում։ Մօտերքս մի այդպիսի օգտակար նուէրի են արժանացել Հոյ անունով ամուսինները։ Արարողութիւնը կատարուել է մի ընդարձակ վրանի տակ տեղական դատաւորի նախագահութեամբ։ Երիտասարդ տղերքից և աղջկերքից կազմուած մի խումբ ընդունել է օրինակելի ամուսինների երդումը և այդ զոյգին ձեռքերի վրայ բարձրացրած է մեն է ածել։

Թեքագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Երկաթուղի Թիֆլիս Վլադիկաւկազ միջև մինչև նոյեմբերի 1-ը։

Թիֆլիսից գնում են՝

Հինգ հոգու տեղ ունեցող փակ կառքերը, առ. 7 ժամին. գիշերում է Գուդաուրը կայարանում և մեծ օրը երեկոյեան ժամը 5-ին հասնում է Վլադիկաւկաս։ Նոյնպէս Թիֆլիսից գնում է առաւօտեան ժամը 9-ին, հիշերում է Մլեթում և մեծ օրը երեկոյեան 8 ժամը 8-ին հասնում է Վլադիկաւկաս։

Վ. ից հոգու տեղ ունեցող օմնիբուսները՝ գնում են երեկոյեան ժամը 4-ին, և առանց գիշերելու կայարաններում, մեծ օրը երեկ. ժամը 8-ին հասնում է Վլադիկաւկաս։ Ժամը 8-ին հասնում է Վլադիկաւկաս երկրորդ անգամ դուրս է գալիս երեկ. ժամը 5-ին և նոյնպէս առանց գիշերելու մեծ օրը երեկ. 8 ժամին հասնում է Վլադիկաւկաս։

Վլադիկաւկազից դուրս են գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող փակ կառքերը առաւօտեան ժամը 7-ին գիշերում է, Պասանաուրը կայարանում և մեծ օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Թիֆլիս։ Մեծը դուրս է գալիս առաւօտեան 9 ժամին, գիշերում է Մլեթում և մեծ օրը երեկոյեան 8 ժամին հասնում է Թիֆլիս։

Վ. ից հոգու տեղ ունեցող օմնիբուսը երեկոյեան ժամը 4-ին, գիշերը չէ կանգ առնում և մեծ օրը երեկոյեան 7 ժամին հասնում է Թիֆլիս, մեծը դուրս է գալիս երեկոյեան 5 ժամին, առանց գիշերելու, մեծ օրը երեկոյեան 9 ժամին 50 ր. հասնում է Թիֆլիս։

Շոգենաւային երթեւեկութիւն Վլադիկաւկազի միջև մինչև նոյեմբերի 1-ը։

Բաթումից գնում են՝

Երեք չաբթի օրերը, երեկոյեան ժ., ուղիղ գծով, Սուխումի և Նովոռոսիյսկի վրայով։

Չորեք չաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռոսիյսկի վրայով։

Շաբաթ՝ օրերը՝ երեկոյեան 8 ժամին, չրջանառու գծով, բոլոր նաւահանգիստներով։

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտասահմանեան գծով, գնալի Կ. Պոլիս

Բաթումից գալիս են

Երկուշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտը, ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, չրջանառու գծով։

Կիրակի օրերը՝ առաւօտը Կ. Պոլսից։

Մահմուդ-Ղափ. Ուղիղ գծով սկող այն նաւերը, որոնք վիրադարձին մտնում են Սուխումի և Նովոռոսիյսկ, Նովոռոսիյսկից դուրս կը գան երեկոյեան ժամը 1-ին, որպէս զի Նովոռոսիյսկի երկաթուղու գործն յարմարին։

Փօթի գալիս են

Սուխումից՝ երեքշաբթի օրերը։
Բաթումից՝ հինգշաբթի, չորեքշաբթի, երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթի օրերը։

Փօթիից գնում են

Բաթում՝ հինգշաբթի օրերը։
Սանատօպոլ՝ ուրբաթ օրերը։

II Կասպից ծովի վրայ

Բաքուից գնում են

Դերբենդ, Պետրովսկ և Աստրախան՝ չորեքշաբթի, ուրբաթ և չաբաթ օրերը, ցերեկը ժամը 1-ին։

Ուզուն-Ադա՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5-ին։

Լէնքօրան, Ասթարա և Էնզէլի՝ երկուշաբթի օրերը, ցերեկը ժամը 1-ին։

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացք թիֆլիս գալիս է

Բաթումից, պատ. 11 ժ. 8 ր. եր.
Բաքուից, » 7 ժ. 40 ր. առ.
Բաթումից, մար. ապ. 8 ժ. — ր. առ.
Գանձակից, » 8 ժ. 20 ր. եր.

Գնացք թիֆլիսից գնում է

Բաթում, պատապ. 8 ժ. 40 ր. առ.
Բաքու, » 12 ժ. 8 ր. գիշ.
Բաթում, մար. ապ. գն. 3 ժ. 10 ր. ց.
Գանձակ, « 9 ժ. 45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և չաբաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

I Բօսթով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Բօսթով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Բօսթովից գնում է 7 ժ. 28 ր. գիշ.
Վլադիկաւկազ գալիս է 7 ժ. — ր. եր.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե կարգի ՈՒՍՈՒՑԻՉ

Ցանկանում է տեղ ունենալ հայոց դպրոցներում։ Կը դասախօսէ ռուսաց լեզուի և թուաբանութիւնից։

Հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

3 1

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Գ. կարգի ցանկանում է դասախօսել հայոց լեզուով աւանդուելիք բոլոր առարկաներից, ձայնագրութիւնից և կրօնից. 24 – 30 դաս առաջին կոպարով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

6 –2

Երրորդ կարգի ՈՒՍՈՒՑԻՉ

ցանկանում է հայոց դպրոցներում դասեր ունենալ հայոց լեզուից, թուաբանութիւնից և բնագիտութիւնից։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեանը։

5 –2

ՈՒՍՈՒՑԻՉ Գ կարգի և ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ Ը կարգի (այր և կին) կամենում են դասեր ունենալ հայ երկաւոր դպրոցներում։ կը դասաւանդեն հայոց լեզու, թուաբանութիւն և այլ առարկաներ։ Ցանկացողները իրենց պայմաններով կարող են դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեանը

5 –3

Կուկիաի Ս. Շուշանիկեան «Թանդոյեան» օրիորդաց երկդասեան ուսումնարանի վարչութիւնը յայտնում է, որ աշակերտուհիների ընդունելութիւնները սկսում են օգոստոսի 24-ից, իսկ վերաքննութիւնները 28 ից մինչև սեպտեմբերի 1-ը։

3—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՇԱՄՔՈՈԵՑՈՑ

Սուրբ Աստուածածնի եկեղեցու գաւթի՝ Տափի թաղի եկեղեցու միդասեան տղայոց ուսումնարանում աշակերտների ընդունելութիւնը և վերաքննութիւնը կ'սկսուի օգոստոսի 25-ից։ Խնդրատուները կարող են դիմել ուսումնարանում աւագ ուսուցիչ Մելքոն Դանագէօզին առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը։

3—1

Մարմնի բրանելու, առաւելապէս ձեռքի մատները, առաջն առնելու համար իւր յայտութեամբը յայտնի

ԳԱԼՄԱՆԻՆԸ

Վաճառւում է Եւրոպայի ամենանշանաւոր քաղաքների և պետութեան բոլոր քաղաքների դեղատներում և դեղավաճառների մօտ։ Գլխաւոր պահեստը գտնւում է Վարշաւայ հնարողի, դեղատնատէր, Ֆարմացիայի մանգիստր Վ. Կոպիևսկու մօտ, Էլէքտորալնայա փողց № 39։ Մեծ արկղ Գալմանինը Վարշաւում արժէ 50 կոպ., փոքրը 30 կոպ.։

Կեղծիքից պէտք է զգուշանալ և պահանջել, որ ամեն մի արկղիկի հետ լինի գործածութեան բացատրութիւնը և Պարիզի ցուցահանդեսի շքքադրամը։

(Ц. 26788) 10 – 7

ՀԱՒԼԱԲԱՐԻ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Խնամակալ վարչութիւնը յայտնում է գիտութիւն հայ հասարակութեան, որ Նորեկ աշակերտուհիների ընդունելութիւնը և հին աշակերտուհիների վերաքննութիւնները սկսւում են առաջինը օգոստոսի 24-ից մինչև 31-ը, իսկ երկրորդը՝ օգոստոսի 24-ից մինչև 27-ը։

Խնամակալ վարչութեան անդամ՝ Ներսէս աւագ քահանայ Աբովեանց։

3—1—

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԴՈՐԾԱՒԻՐ ՄՆԱՑՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ Ե. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց, գործադիր մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակները ու բանասէրներն, որք ազգային դպրութեան և Պատմութեան վերաբերեալ որ և է աշխատութեամբ մը կը փափաքեն մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան գրական Մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւնները յուղարկել մինչև յառաջիկայ 1891 տարւոյ Յունուարի վերջ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրենյանձնաժողովոյս հասցէին։

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրինակ յուղարկուին, իսկ ձեռագիրք բնաւ յետ չեն դարձուիր։

8—8

ՎԱՃԱՌՈՒՄ Է

մի կարգ գետին, Ընճալեան փողոց, տուն Շմիրովի №№ 35, 37։

3—3

ՊԱՆՍԻՕՆ Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑԻ

Դիշերօթիկ, կիսագիշերօթիկ և երթևեկ աշակերտների ընդունելութիւնը և քննութիւնները կ'սկսուին ՕԳՈՍՏՈՍԻ 20-ից, իսկ ուսումը —ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ից։

Պատրաստում է երեխաներին արքունական բոլոր ուսումնարանները մտնելու համար։

Սօլօլակ, Դանովսկայա փողոցի դիմաց, Սադովայա № 38։

5—3

ԳՈՒԱՐԱՆԱ ԳՐԻՄՕ և ԸՆԿ.

(GUARANA GRIMAULT & Cie)

Պարիզի դեղագործներ.—Խոյապրուած Ռուսիայում։

Բրազիլիայից բերուող այս դեղը պատրաստում է Paullinia sorbilis-ի պտուղներից. բժիշկները այդ դեղը տալիս են գլխացաւի և ջղերի ցաւերի դէմ։

Պահեստն է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։

15—15

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го Августа 1890 г. Կաւկազ լրագրի գրասենեակի Տպարան Типографія конторы газеты Кавказъ, Гол.-пр., д Читахова.